ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակաշրջանում համագործակցված աշխատանքներ են տարվել տեղական ինքնակառավարման մարմինների և պետական կառավարման համակարգի մարմինների հետ:

Անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել մարզի համայնքների **2024** թվականի տարեկան աշխատանքային պլանների հաստատման ուղղությամբ. մարզի **5** համայնքներում սահմանված ժամկետներում հաստատվել են **2024** թվականի Տարեկան Աշխատանքային Պլանները, որոնք բխել են համայնքների զարգացման ծրագրերի **2024** թվականի համար նախատեսված միջոցառումներից:

Տարվել են աշխատանքներ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների կատարման նպատակով ավագանու նիստերի հրավիրման ժամկետների պահպանման, ընդունված որոշումներն օրենքով սահմանված ժամկետում մարզպետի աշխատակազմ ներկայացնելու, որոշումներն օրենսդրությանը համապատասխանեցնելու, ընդունված իրավական ակտերի և բյուջեների հրապարակայնության ապահովման ուղղությամբ:

Համակարգվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և ընթացիկ օրենսդրությանը հակասող մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումները մարզպետի պահանջով վերանայելու գործընթացը:

Համակարգվել է համայնքային բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից ավագանուն տրված

եռամսյակային հաղորդումների և տարեկան հաշվետվությունների տրման աշխատանքները:

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության ապահովման ուղղությամբ: Այդ նպատակով համայնքների պաշտոնական կայքերում և ֆեյսբուքյան էջերում պարբերաբար տեղակայվել են տեղեկություններ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ:

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման ուղղությամբ: Համայնքների ղեկավարների և ավագանու անդամների կողմից կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն և հանդիպում համայնքների բնակչության հետ:

Համայնքներում իրականացված միջոցառումների վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել ամսական, եռամսյակային և կիսամյակային հաշվետվություններ: Մասնավորապես՝

1.Ամսական հաշվետվությունների մասով.

1.1. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 10.02.2017 թվականի թիվ 01/15/685-17 հանձնարարականի պահանջների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն մարզի ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում կուտակված աղբի մաքրման աշխատանքների վերաբերյալ,

1.2. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 04.03.2022 թվականի թիվ ԳՍ/15.4/5385 հանձնարարականի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն

մարզի համայնքներում համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարված մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների արդյունքների վերաբերյալ,

1.3. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 12.04.2022 թվականի թիվ ԳՍ//9017-2022 հանձնարարականի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն խոշորացված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների և աշխատակազմերի գործունեության կազմակերպման ընթացքում լիազոր մարմնի կողմից տրամադրված ուղեցույցի դրույթների կիրառման նկատմամբ սահմանված հսկողության արդյունքների վերաբերյալ,

1.4. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 02.02.2023 թվականի թիվ ԳՍ/20.1/3143-2023 հանձնարարականի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների ղեկավարների, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների և համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների չօգտագործված արձակուրդների վերաբերյալ:

2.Եռամսյակային հաշվետվությունների մասով.

2.1. Ի կատարումն ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի 24.05.2010 թվականի թիվ 01/16/3030-10 հանձնարարականի և ի կատարումն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի 72.6 կետի 3-րդ ենթակետի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն համայնքների ղեկավարների և ավագանու կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թվաքանակի վերաբերյալ,

2.2. Ի կատարումն ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի 11.08.2010 թվականի թիվ 01/16/4439-09 հանձնարարականի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն մարզի համայնքների բյուջեների, բյուջեների եռամսյակային և տարեկան հաշվետվությունների, բյուջեներում կատարվող փոփոխությունների, համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման վերաբերյալ,

2.3. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 11.04.2022 թվականի թիվ ԳՍ//8856-2022 հանձնարարականի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն խոշորացված համայնքներում էլեկտրոնային եղանակով իրականացվող գործառույթների և տրամադրվող ծառայությունների վերաբերյալ:

2.4. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 11.04.2022 թվականի թիվ ԳՍ//8856-2022 հանձնարարականի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ Վայոց ձորի մարզի խոշորացված համայնքների վերաբերյալ:

2.5. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 17.01.2022 թվականի թիվ ԳՍ//900-2022 հանձնարարականի պահանջների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների համացանցային կայքերի մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ:

2.6. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 12.04.2022 թվականի թիվ ԳՍ//9017-2022 հանձնարարականի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ Վայոց ձորի մարզի միավորված համայնքներում ստացված տեխնիկայի և կատարված աշխատանքների վերաբերյալ:

Մարզի հինգ համայնքներում միասին առկա է 70 միավոր տեխնիկա / Եղեգնաձոր՝ 6, Վայք՝ 31, Ջերմուկ՝ 10, Արենի՝ 9, Եղեգիս՝ 14/:

2.7 Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 13.12.2023 թվականի թիվ ԳՍ//37609-2023 հանձնարարականի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 1109-Ն որոշման հավելվածում նշված օպերատոր-համայնքների կողմից մատուցված պետական ծառայությունների վերաբերյալ:

3.Կիսամյակային հաշվետվությունների մասով.

3.1. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հանձնարարականի պահանջների՝ ՀՀ Վայոց ձորի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի **30.11.2023** թվականի թիվ **2530-Ա** հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի և ՀՀ Վայոց ձորի մարզպետի **08.05.2024** թվականի թիվ **166-Ա**, որոշման պահանջների՝ **2024** թվականի **մայիսի 20-ից հունիսի 3-ը**, իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել ՀՀ Վայոց ձորի մարզի **Ջերուկ** համայնքում:

Իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

Հսկողության ժամանակ արձանագրվել են թերություններ և բացթողումներ **<<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին>> ՀՀ օրենքների** պահանջների կատարման ուղղությամբ:

Թերությունների և բացթողումների վերաբերյալ սահմանված կարգով կազմվել են արձանագրություններ՝ քննարկվել և սահմանվել են թերությունների վերացման ժամկետները:

Կազմված արձանագրությունները և հայտնաբերված խախտումները սահմանված ժամկետներում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և տեղադրվել են մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում:

2024 թվականի ընթացքում համակարգվել է համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոնների մրցույթների հայտարարման գործընթացը:

Մարզի համայնքներում **2024** թվականի ընթացքում համայնքային ծառայության **13** թափուր պաշտոնների համար հայտարարվել են մրցույթներ (**13** մրցույթներից **2**-ը եղել են կրկնակի մրցույթներ), որոնց արդյունքում համալրվել են **9** պաշտոններ (թվով **4** մրցույթներ չեն կայացել):

Հաշվետու ժամանակահատվածում ատեստավորվել են **15** համայնքային ծառայողներ:

2024 թվականին համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագրերի շրջանակներում վերապատրաստվել են **համայնքապետարանների աշխատակազմերի** թվով **40 համայնքային ծառայողներ:**

ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքապետարանների աշխատակազմերում **2024** թվականի դեկտեմբերի **31**-ի դրությամբ համայնքային ծառայության

պաշտոնների թիվը **148** է, որից հիմնական զբաղեցրած՝ 122, ժ/պ՝ 15, թափուր՝ 11:

2024 թվականին տեղական ինքնակառավարման մարմինների վերապատրաստման ծրագրերի՝ **ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) հետ համագործակցությամբ իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում՝** 59-ը, **Տեղական ինքնակառավարման մարմինների վերապատրաստում ծրագրի շրջանակներում՝** 19-ը, **ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) և Նորվեգիայի Թագավորության արտաքին գործերի նախարարության հետ համագործակցությամբ իրականացվող «Դիմակայունություն բոլորի համար» ծրագրի շրջանակներում՝** 43 **ավագանու անդամներ վերապատրաստվել են:**

Ավագանու ինստիտուտի կայացման և հատկապես ավագանու անդամների վերապատրաստման գործընթացի ապահովման հետ մենք դեռևս ունենք խնդիրներ, կապված ավագանու որոշ անդամների վերապատրաստման ծրագրերից հրաժարվելու, ավագանու հրավիրված նիստերին չմասնակցելու, կամ շատ քիչ մասնակցելու հետ: Ավագանու պարտականությունների մեջ է մտնում՝ նիստերին մասնակցելը, բնակիչների հետ հանդիպելը և բնակիչների կողմից առաջարկված խնդիրները ավագանու քննարկմանը ներկայացնելը: Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ, որպեսզի հնարավորինս զարգացնել ավագանու ինստիտուտը և բարձրացնել ավագանու դերակատարումը համայնքի զարգացման գործում:

Կազմակերպվել են մարզպետի այցելություններ մարզի համայնքներ: Համակարգվել են այցելությունների ընթացքում բարձրացված խնդիրների կարգավորման աշխատանքները:

Համագործակցելով մարզի համայնքապետարանների աշխատակազմերի հետ՝ գույքագրվել են համայնքներում առկա հիմնախնդիրները: Համայնքների և մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից տրվել են դրանց լուծման նախնական հնարավոր գնահատականները: Գույքագրված և գնահատված հիմնախնդիրները մարզպետի աշխատակազմում քննարկվել են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ:

2024 թվականի ընթացքում աշխատանքային պլաններին համաձայն և ըստ անհրաժեշտության առողջ համագործակցություն է ապահովվել պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ:

Ապահովվել է Մարզպետի աշխատակազմ-ՏԿԵ նախարարություն, մարզպետի աշխատակազմ-համայնքներ փոխհամագործակցությունը:

Փոխհարաբերությունների մասին խոսելիս կարելի է առանձնացնել համայնքներում իրականացվող սուբվենցիոն ծրագրերը, որոնցում ավելի պարզ և ընկալելի է դառնում առկա հարաբերությունները, մասնավորապես Կառավարության կողմից սահմանված կարգով՝ մարզի համայնքների բնակիչների համար բարեկեցիկ պայմաններ ապահովելու համար, համայնքները մարզպետի աշխատակազմ են ներկայացնում ծրագրեր, որոնք ուսումնասիրվում են մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների կողմից, անհրաժեշտության դեպքում տրվում է մեթոդաբանական օգնություն: Եվ արդեն իսկ կազմված ծրագրերը մարզպետի աշխատակազմի միջոցով ներկայացվում է ՏԿԵ նախարարություն: ՏԿԵ նախարարությունն էլ ներկայացնում է

Կառավարության հաստատմանը: Ծրագրերի հաստատումից հետո Կառավարության համապատասխան համաֆինանսավորմամբ այս ծրագրերը կյանքի են կոչվում: Հենց այս բերված օրինակով էլ ամբողջապես պարզ է դառնում մարզպետի աշխատակազմ-ՏԿԵ նախարարություն, մարզպետի աշխատակազմ-համայնքներ կապի կամ փոխհարաբերությունների ամբողջ էությունը:

Անդրադառնելով համայնքներում իրականացվող ծրագրերին, հատկապես կարևորվում է վարչական ղեկավարների ինստիտուտի զարգացումը: Համայնքներում իրականացվող սուբվենցիոն և ընդհանրապես բոլոր ծրագրերն իրականացնելուց առաջ անցկացվում են հանրային լուսումներ, որոնց մասնակցում են բնակավայրի բնակիչների շատ քիչ տոկոսը: 2024 թվականին բնակիչների հետ հանդիպումների ընթացքում պարզվում է, որ որոշ բնակիչների մոտ առաջանում են դժգոհություններ բնակավայրերում իրականացվող ծրագրերի առաջնահերթության վերաբերյալ: Հենց այստեղ է կարևորվում վարչական ղեկավարի՝ բնակիչների հետ ամենօրյա շփումների, առկա իրավիճակի, կարևորագույն խնդիրների վերհանումը: Բնակավայրերում իրականացվող ծրագրերի իրականացման ընթացքում վարչական ղեկավարներն ամենօրյա պարբերականությամբ պետք է հետևողական աշխատանքներ իրականացնեն և թերությունների հայտնաբերման դեպքում ձեռնարկեն համապատասխան միջոցներ:

Վարչության գործառույթներից բխող աշխատանքները պատշաճ որակով և ժամանակին կատարելու նպատակով վարչությունը Mulberry համակարգով իրականացրել է աշխատանքներ թվով **2230** հանձնարարականների և գրությունների պահանջների կատարման ուղղությամբ, միաժամանակ՝ իրականացվել են նաև Mulberry համակարգով չհաշվեգրված տեղեկությունների հավաքագրման, մշակման և վերլուծության աշխատանքներ:

2025 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1.Իրավական մասնագիտական հսկողության աշխատանքների իրականացում մարզի Արենի և Եղեգիս համայնքներում:

2.Համայնքային ծառայողների վերապատրաստումների, ատեստավորումների և մրցույթների անցկացման, համակարգման աշխատանքների իրականացում, թափուր պաշտոնների մրցույթների հայտարարության հրապարակում մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում, մրցույթների արդյունքների և համայնքային ծառայողների գրանցամատյանների ներկայացում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,

3.Համայնքների ավագանու անդամների վերապատրաստման աշխատանքների համակարգում:

4. ՀՀ Վայոց ձորի մարզպետի համայնքներ և բնակավայրեր այցելությունների գործընթացի կազմակերպում, այցելությունների ժամանակ բնակավայրերում առկա իրավիճակի գնահատում, խնդիրների վերհանում և դրանց լուծման վերաբերյալ անհրաժեշտ միջոցների ձեռնարկում:

5.Ըստ ՏԿԵՆ տրված հանձնարականների պահանջների՝ կատարված աշխատանքների վերաբերյալ ամսական, եռամսյակային, կիսամյակային հաշվետվությունների հավաքագրում, վերլուծում և ներկայացում նախարարություն:

6. ՏԿԵ նախարարություն, մարզպետի աշխատակազմ և համայնքներ փոխհարաբերությունների ապահովում: